

- Մեպտեմբերին աճը կտրուկ բարձրացավ մինչև 10.5 տոկոս (տ/տ)՝ պայմանավորված սննդի և մետաղների արտադրությամբ:
- Զուտ ոչ առևտրային դրամական փոխանցումները ավելացան 16.2 տոկոսով (տ/տ)՝ Ռուսաստանից ներհոսքերի հաշվին:
- Հոկտեմբերին պահպանվեց գնաճի 3.7 տոկոս մակարդակը, և ՀՀ ԿԲ-ն անփոփոխ թողեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը:
- Մեպտեմբերին թանկարժեք քարերի և մետաղների վերաարտահանման աստիճանական դադարումը շարունակվեց:
- 1-ին-3-րդ եռամսյակների պակասորդը մնաց կանխատեսումներից ցածր մակարդակի վրա՝ կազմելով տարեկան կանխատեսված ՀՆԱ-ի 0.73 տոկոսը:

Մեպտեմբերին տնտեսական ակտիվության աճը բարձր էր՝ 10.5 տոկոս (տ/տ՝ տվյալ ժամանակահատվածը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ)՝ օգոստոսի 7.5 տոկոսի համեմատ (գծապատկեր 1): Սա պայմանավորված էր արդյունաբերության աճի գրեթե կրկնապատկմամբ, ընդ որում՝ թողարկման աճը սեպտեմբերին 10.1 տոկոս էր (տ/տ)՝ օգոստոսի 5.8 տոկոսի համեմատ (տ/տ): Մշակող արդյունաբերությունն աճեց 12.1 տոկոսով (տ/տ)՝ սննդի արտադրության ծավալների մեծացման և գունավոր մետաղների արտադրության շարունակական ընդլայնման հաշվին: Հանքարդյունաբերության ակտիվության աճը 1.8 տոկոս էր (տ/տ)՝ օգոստոսի անփոփոխ աճից հետո: Առևտուրը (մեծածախ և մանրածախ) թուլացավ՝ կազմելով 0.9 տոկոս (տ/տ): 1-ին-3-րդ եռամսյակների աճը 7.6 տոկոս կազմեց՝ աճողական ցուցանիշով, զգալիորեն գերազանցելով սկզբնական սպասումները: Օգոստոսի 3.5 տոկոսով անկումից հետո իրավաբանական անձանց գրանցումներն արագ՝ 26.8 տոկոսով աճեցին (ա/ա՝ տվյալ ամիսը՝ նախորդ ամսվա նկատմամբ)՝ անհատ ձեռնարկատերերի գրանցումների 32 տոկոս (ա/ա) և ՍՊԸ-ների գրանցումների 14.2 տոկոս (ա/ա) աճի շնորհիվ:

Մեպտեմբերին զուտ ոչ առևտրային դրամական փոխանցումների երկնիշ աճը շարունակվեց (16.2 տոկոս, տ/տ): Սա պայմանավորված էր Ռուսաստանից զուտ ներհոսքերի 60 տոկոս (տ/տ) աճով, որին բաժին է ընկնում ընդհանուր զուտ ներհոսքերի 63 տոկոսը և Միացյալ Նահանգներից զուտ ներհոսքերի 3.7 տոկոս (տ/տ)՝ ավելացումով (գծապատկեր 2):

Հոկտեմբերին գնաճը կայունացավ 3.7 տոկոս (տ/տ) մակարդակի վրա (գծապատկեր 3): Մանդամթերքի և ոչ ակոհոլային խմիչքների գնաճը (5.6 տոկոս տ/տ) մնաց հոկտեմբերի գնաճին հիմնական նպաստողը (ընդհանուր աճի 61 տոկոսը): Նոյեմբերի 4-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) որոշեց վերաֆինանսավորման (քաղաքականության) տոկոսադրույքն անփոփոխ՝ 6.75 տոկոս թողնել, ինչը նշանավորեց առանց տոկոսադրույքի փոփոխության: Վեցերորդ անընդմեջ նիստը:

Մեպտեմբերին արտահանման և ներմուծման ծավալների նվազման տեմպը թուլացավ՝ պայմանավորված վերաարտահանման աստիճանական դադարեցմամբ (գծապատկեր 4): Արտահանումը սեպտեմբերին նվազեց 24.4 տոկոսով (տ/տ)՝ օգոստոսի 40.8 տոկոսի (տ/տ) համեմատ: Ներմուծումը նվազեց 19.5 տոկոսով (տ/տ)՝ հաջորդելով օգոստոսի 28.3 տոկոսով (տ/տ) նվազմանը: Սա հիմնականում պայմանավորված էր թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և մետաղների արտահանման (67.2 տոկոս, տ/տ) և ներմուծման (78,2 տոկոս, տ/տ) նվազմամբ: Արտահանման ցուցանիշն իջավ նաև կենդանիների (նվազումը՝ 30.4 տոկոս, տ/տ), տեքստիլի (նվազումը՝ 17.6 տոկոս, տ/տ) և փոխադրումների (նվազումը՝ 15.2 տոկոս, տ/տ) ծավալների կրճատման հաշվին: Սա մասամբ չեզոքացավ հանքանյութերի (աճը՝ 56.3 տոկոս, տ/տ), պատրաստի սննդամթերքի (աճը՝ 20.5 տոկոս, տ/տ) և մեքենա-սարքավորումների (աճը՝ 14.5 տոկոս, տ/տ) արտահանման աճի շնորհիվ: Մեպտեմբերին, բացառելով թանկարժեք մետաղների և քարերի վերաարտահանմամբ առևտուրը, արտահանումը և ներմուծումը աճել են համապատասխանաբար 16.7 տոկոսով (տ/տ) և 7.3 տոկոսով (տ/տ): Արտահանման աճողական ցուցանիշը՝ տարեսկզբից մինչ օրս, կրճատվել է 46.8 տոկոսով (տ/տ), իսկ ներմուծման ցուցանիշն իջել է 33.4 տոկոսով (տ/տ): Հոկտեմբերին, 2025 թ.-ի սկզբին դանդաղ մեկնարկից հետո զբոսաշրջիկների ժամանումները Հայաստան ավելացան 4.4 տոկոսով (տ/տ)՝ ավելի դանդաղ տեմպով, քան ամռան ընթացքում:

Հոկտեմբերին ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը միջինը կայուն է պահպանվել նախորդ ամսվա համեմատ: Անցյալ տարվա նույն ամսվա համեմատությամբ՝ ՀՀ դրամը հոկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվեց 1.2 տոկոսով (տ/տ)՝ միաժամանակ համապատասխանաբար 5.5 տոկոսով (տ/տ) և 17.7 տոկոսով (տ/տ) արժեզրկվելով եվրոյի և ռուբլու նկատմամբ: Մեպտեմբերին իրական արդյունավետ փոխարժեքը

(REER) նվազեց 1 տոկոսով (տ/տ): Համախառն պահուստները կայունացան 4.3 միլիարդ ԱՄՆ դոլարի՝ ներմուծման 3.4 ամսվա ծածկույթին համարժեք մակարդակում:

Մեպտեմբերին առևտրային բանկերի ավանդներն աճեցին 1.1 տոկոսով (ա/ա), իսկ վարկերի ցուցանիշն ընդլայնվեց 2.1 տոկոսով (ա/ա): Երկուսի աճն էլ շարունակել է պայմանավորված լինել ՀՀ դրամով արտահայտված միջոցներով: Վարկավորման աճը հիմնականում պայմանավորված էր ՀՀ դրամով սպառողական և հիփոթեքային վարկերով, ընդ որում՝ ընդհանուր վարկերի նկատմամբ 45 տոկոս մասնաբաժնով: Հունվարից սկսած՝ հիփոթեքային վարկերը, չնայած մեծ ծավալներին, նվազել են՝ պայմանավորված եկամտային հարկի վերադարձի ծրագրի աստիճանական դադարեցմամբ: Փոխարժեքով ճշգրտված տարեկան աճը կայունացել է 16 տոկոսի մակարդակում (տ/տ) ընդհանուր ավանդների դեպքում և 27.2 տոկոսի (տ/տ)՝ վարկերի (գծապատկեր 5):

Մեպտեմբերին գրանցվեց կանխատեսված տարեկան ՀՆԱ-ի 0.1 տոկոսին հավասար պակասուրդ: Հարկային եկամուտները (այդ թվում՝ հիփոթեքային վարկերի հետ կապված եկամտային հարկը) անվանական արտահայտությամբ աճեցին


8.7 տոկոսով (տ/տ)՝ պայմանավորված հավաքված ավելի բարձր ԱԱՀ-ով (աճը՝ 25.4 տոկոս, տ/տ), եկամտային հարկերով (աճը՝ 10.7 տոկոս, տ/տ) և շահութահարկերով (աճը՝ 12.6 տոկոս, տ/տ): Սոցիալական վճարները բարձրացան 13.3 տոկոսով (տ/տ), իսկ հավաքված շրջանառության հարկն ավելացավ 53.1 տոկոսով (տ/տ)՝ 2025 թ.-ին շրջանառության հարկերի ավելի բարձր դրույքաչափի շնորհիվ: Սակայն հավաքված բնապահպանական հարկի ցուցանիշը նվազեց 22.5 տոկոսով (տ/տ): Ընդհանուր ծախսերն ավելացան 23 տոկոսով (տ/տ): Կապիտալ ծախսերն ավելացան 79.5 տոկոսով (տ/տ)՝ հիմնականում պաշտպանական ծախսերի ցուցանիշի 50.7 տոկոսով (տ/տ) բարձրանալու հաշվին: Կրթության ծախսերը գրեթե կրկնապատկվեցին (տ/տ)՝ պայմանավորված շարունակվող դպրոցաշինության և դպրոցների հիմնանորոգման ծրագրերով: Ընթացիկ ծախսերն անվանական արտահայտությամբ ավելացան 7.8 տոկոսով (տ/տ)՝ հիմնականում սոցիալական պաշտպանության ծախսերի հաշվին (աճը՝ 8.9 տոկոս, տ/տ): 1ին-3-րդ եռամսյակների ընթացքում պակասուրդի աճողական ցուցանիշը հասավ կանխատեսված տարեկան ՀՆԱ-ի 0.73 տոկոսին՝ համեմատած 2025 թ. համար նախատեսված՝ ՀՆԱ-ի 5.5 տոկոս պակասուրդի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄՄԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ.

ՆՈՅԵՄԲԵՐ 2025 Թ.

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվությունը կտրուկ աճեց՝ 2025 թ. սեպտեմբերին կազմելով 10.5 տոկոս (տ/տ)


(Հայաստանի տնտեսական ակտիվության ինդեքս, տ/տ (հազար ԱՄՆ դոլար) փոփոխություն, %)



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե


Գծապատկեր 3. 2025 թ. սեպտեմբերին տարեկան գնաճը մնաց նույն մակարդակի վրա

(ՄԳԻ գնաճ, տ/տ փոփոխություն, %)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ


Գծապատկեր 2. Զուտ ոչ առևտրային դրամական փոխանցումները 2025 թ. սեպտեմբերին շարունակեցին աճել (տ/տ)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 4. Վերաարտահանման նվազումը 2025 թ. սեպտեմբերին թուլացավ

(միլիարդ ԱՄՆ դոլար)




Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄՍԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ. ՆՈՅԵՄԲԵՐ 2025 Թ.

Գծապատկեր 5. Վարկերի և ավանդների բարձր
աճը 2025 թ. շարունակվել է


(%, տ/տ, փոխարժեքով ճշգրտված)



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 6. Բյուջեում 2025 թ. 1-ից-3-րդ
եռամսյակներում փոքր պակասուրդ է գրանցվել

(միլիարդ ՀՀ դրամ)



Աղբյուր՝ Ֆինանսների նախարարություն